ԹՈՒՐՔ – ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԳԱՆ*

ՄԵԹԵ ԹՈՒՆՉԱՅ

Սրանից երկու տարի առաջ, 1998թ. հունիսի 5-ին «Ակոս» շաբաթաթերթում (թիվ 114) ես առիթ էի ունեցել ներկայացնել իմ տեսակետը Հայկական հարցի վերաբերյալ: Ես այդ ժամանակ ասել էի, թե ոչ մի իմաստ չեմ տեսնում այն բանում, որ Թուրքիայի հանրապետության Արտաքին գործերի նախարարության մի հրահանգ կամ Սենատի կողմից քվեարկված բանաձև ինձ՝ պատմաբանիս, սովորեցներ ինչ էր տեղի ունեցել 1915թ.:

Այս ժողովում ես առաջարկում եմ մեր հայացքները ուղղել դեպի ներկան և ապագան, այլ ոչ թե դեպի անցյալը: Հայերը, որոնք հետաքրքրում են ինձ, առաջին հերթին Թուրքիայում բնակվող իմ համաքաղաքացիներն են, այնուհետև իմ հարևանները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Ինչ վերաբերում է սփյուռքին՝ Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի կամ Միջին Արևելքի հայերին, ապա, խոստովանում եմ, նրանք ինձ ավելի քիչ են մտահոգում:

Թուրքիան բազմազգ մի երկիր է: Այնպես, ինչպես համարյա բոլոր բազմազգ պետությունները: Չնայած դրան՝ մեր պետությունը փոքրամասնություն է համարում միայն երեք ոչ մահմեդական համայնքներին (հույն, հայ, հրեա) որոնց գոյությունն իբրև այդպիսին նա ընդունել էր Լոզանի դաշնագրով՝ 1923-ին (պետք է, այդուհանդերձ, ավելացնել, որ ըստ այդ դաշնագրի հոդվածների, Թուրքիան որոշ իրավունքներ է զիջում այնպիսի համայնքների, ինչպիսիք են կաթոլիկները, բողոքականները և սիրիական քրիստոնյաները): Սակայն թուրք բնակչության մեջ կան այլ ազգային խմբավորումներ, որոնք, մահմեդական լինելով հանդերձ, թրքալեզու չեն: Դրանցից ամենամեծը քրդական խմբավորումն է: Քրդերը, որոնք այնպես, ինչպես հայերը պնդում են թե իրենք արևելյան Անատոլիայի բնիկ ժողովուրդ են, մահմեդական լինելու հետևանքով Օսմանյան իշխանությունների կողմից համարվում էին իբրև իշխող համայնքների (millit-I hâkime) մի մասը և վայելում էին որոշ ինքնավարություն: Նրանք,

* Զեկուցումը կարդացվել է 2000թ. հունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատի շենքում կազմակերպված «Հայ-թուրքական երկխոսությունը հայկական հարցի մասին» միջազգային գիտաժողովում:

այնպես ինչպես թուրքերը, տարաբաժանվում են կրոնական երկու ոտղությունների՝ սյունի և ալևի, և ունեն նույնիսկ իրենց «քրդերը» («Զազա»): Նախկինում քրդերը քոչվոր էին, իսկ հայերը նստակյաց: Հետագայում արդիականացման գործընթացը շեշտը դրեց բոլոր քաղաքացիների հավասարության վրա, իսկ սոցիալական և քաղաքական կյանքի կենտրոնացման և միօրինականացման արդյունքում քրդերը կորցրին իրենց մենաշնորհները:

XX դարի վերջին քառորդում ինքնության խնդիրը դարձավ առաջնակարգ մի հարց: Քրդերը ցանկացան, որ ճանաչվի իրենց ուրույն ինքնությունը: Նրանք պահանջեցին, որ արվի ամեն անհրաժեշտը՝ իրենց մշակութային իրավունքների իրականացման համար. մայրենի լեզվի ուսուցում, քրդական արվեստի և գրականության ազատ զարգացում... Դրա փոխարեն Թուրքիայի իշխող դասակարգը պնդեց, թե քրդերի հանդեպ չէր կիրառվում և ոչ մի անհատական խտրականություն, բայց նրանց՝ իբրև ազգային փոքրամասնության ճանաչումն իր հետ կբերեր նոր պահանջներ, որոնք կարող էին հանգեցնել Թուրքիայի հանրապետությունից քրդերի անջատմանն ու մի անկախ պետության ստեղծմանը: Ինձ նման մտածող թուրք մտավորականները, այսինքն նրանք, ովքեր բացարձակապես նեցուկ են քրդերի մշակութային իրավունքների ճանաչմանը, ընդունում են, թե պետության մտահոգությունն այդ առթիվ ունի նաև որոշ հիմքեր: Մենք մաղթում ենք, որ կարողանանք շարունակել քրդերի հետ հարաբերությունները ոչ թե այն բանի համար, որ նրանք ստիպված լինեն ընդունել թրքական տիրապետությունը, այլ որպեսզի նրանք ցանկանան ապրել մեզ հետ, վստահ լինելով, թե իրենց բոլոր օրինական պահանջները կբավարարվեն Թուրքիայի հանրապետության ներքո:

Եթե խնդիրներից առաջինը, որին բախված է Թուրքիան, քաղաքական իսլամիզմն է, ապա երկրորդը հանդիսանում է քրդերի հետ հարաբերությունների հարցը: Իմ կարծիքով այդ երկու հարցերը չունեն մեկուսացված լուծումներ: Լուծումը պետք է լինի ամբողջական: Եթե Թուրքիան կարողանա յուրացնել ժամանակակից ժողովրդավարության մարդասիրական և խաղաղասիրական չափանիշները, ապա նա կկարողանա հաղթահարել հավատի, ինքնության և լեզվի տարբերությունների հետևանքով առաջացող լարվածությունները: Այդ տարբերությունները չեն դառնա տարաբաժանման և թուլության պատճառներ, այլ կհանդիսանան հարստության աղբյուր: Այս ենթադրությունները, իհարկե, շատ հաճելի է լսել, բայց արդյո՞ք դրանք իրապաշտական են: Կկարողանա՞ Թուրքիան, իսկապես, բավական կարճ ժամանակամիջոցում, յուրացնել խաղաղասիրական ու մարդասիրական բազմախոհությունը:

Դժբախտաբար, թուրք քաղաքական ղեկավարների մեծամասնությունը քաջալերում է ցեղատյաց քաղաքականության նախնական և վայրի բնազդները, դիմելով մի քարոզչության, ըստ որի մենք շրջապատված ենք ներքին և արտաքին թշնամիներով: Ճիշտ է անշուշտ, որ ընդամենը ութսուն տարի առաջ քայքայված մի կայսրության ժառանգորդները չեն կարող չունենալ ներկա Թուրքիայի քայքայման վախը: Նրանք, ովքեր ապրում են երկրի ամենահեռավոր վայրերում և հեռուստատեսության հաղորդումներից ծանոթանում են հարուստ երկրների կյանքի մակարդակին, չեն կարող առանց նախանձի վերաբերվել այդ ամենին: Թուրքիայի անդամակցությունը Եվրոպական Միությանը դիտվում է մեզանում ամենից առաջ իբրև

կյանքի մակարդակի բարձրացման և բարգավաճման մի հարց: Ոմանք կարծում են, թե մենք պետք է հարգենք մարդու իրավունքներն իբրև մի զոհաբերություն, մի գին, որ պետք է վճարել Եվրոպական համայնք մտնելու համար, այլ ոչ թե՝ որովհետև մեր քաղաքացիներն արժանի են դրան:

Բարեբախտաբար պատմության ժառանգությունը ամբողջապես ժխտական չէ, այն ունի նաև դրական կողմեր: Օսմանյան իշխանությունների օրոք յոթ դար շարունակ և նունիսկ նրանից առաջ Բյուզանդական կայսրության ներսում դարեր ի վեր միասին ապրած ժողովուրդները, նախքան վերջին դարում ազգայնապաշտ զրգռումների հետևանքով իրար կոտորելը, ունեցել են մարդկային, խաղաղ հարաբերություններ, շատ բան են սովորել իրարից և միասին ստեղծել են գեղեցիկ գործեր: Հույն դասախոս Դիմիտրի Կիցիկիսը, որն ավանդում է Կանադայում, Օտավայի համալսարանում, սրանից տասնհինգ տարի առաջ հրատարակել է «Օսմանյան Կայսրություն» վերնագրով մի գրքույկ (*Que sais-je* հավաքածու): Այս գիրքը թարգմանվել է թրքերեն, «Թուրք-հունական կայսրություն» խորագրով, ինչը համապատասխանում է գրքի բովանդակությանը: Իմ կարծիքով, հեղինակը ճշմարիտ է իր մոտեցման մեջ. միայն ինձ այնքան էլ արդարացի չթվաց այն հանգամանքը, որ նա այդքան մեծ կարևորություն էր տվել հին հույներին: Իսկապես, Օսմանյան մշակույթը միայն թրքական չէ, այն մի շարք մշակույթների համադրությունն է: Եվ այդ բոլոր բնագավառներում՝ խոհարարական արվեստից մինչև երաժշտությունը, նա պարունակում է նույնքան հայկական, հունական և հրեական, որքան թրքական տարրեր: Այս պատճառով էլ ինձ թվում է, թե մեր ընդհանուր ավանդույթները և սովորությունները հանդիսանում են մի ազդակ, որը կարող է օգնել մեզ խաղաղասիրական և մարդասիրական սկզբունքներին հասնելու համար:

Այսօր Թուրքիայի հայերը, որոնք կազմում են ամենամեծաքանակ ոչ մահմեդական փոքրամասնությունը, ունեն տնտեսական խնդիրներ՝ կապված համայնքային հաստատությունների հետ. բացի այդ, թուրք ազգայնապաշտ տարրերի կողմից նրանք համարվում են «պոտենցիալ դավաճաններ»: Մի թուրք նախարարուհի ՔԿԿ-ի ղեկավար Արդուլա Օջալանին վիրավորելու համար անվանել էր նրան «հայի ծնունդ»: Եվ նույնիսկ, եթե այդ տիկինը այնուհետև ներողություն էր խնդրել իր այդ խոսքերի համար, ապա դրանք շատ տիպականորեն արտացոլում են թուրք ազգայնականներին հատուկ հոգեբանությունը: Այդպիսի վերաբերմունքների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ավելի շատ տեղ տալ մեր հայ համաքաղաքացիներին Թուրքիայի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում: Ապա հերթը կգա նաև քաղաքական կյանքում նրանց մասնակցությանը: Արվեստի և արհեստագործության բնագավառներում արդեն իսկ շատ հայեր են աչքի ընկել իրենց արժանիքներով և հանդիսանում են երկրի փառքը: Ես անձամբ ունեմ հայ բարեկամներ, որոնց հետ աշխատում եմ տարբեր հասարակական կազմակերպություններում: Բիլգի համալսարանի գիտությունների և գրականության ֆակուլտետում, որի ղեկավարն եմ ես, հասարակագիտության բաժնի ղեկավարը Ստամբուլից մի հայուհի է, որն իր դոկտորականի նյութը պաշտպանել է Օքսֆորդի համալսարանում: Ես կարծում եմ, որ մեր այս համագործակցությունը կնպաստի հայերի հանդեպ ազգայնամոլ զրգռումներն արհամարող հասարակական կարծիքի ստեղծմանը:

Գալով Թուրքիայի և Հայաստանի հարաբերություններին, ես կանխատեսում եմ երկու տեսակի դժվարություններ: Առաջինը վերաբերում է անցյալին: Ըստ իմ տեղեկությունների, Հայաստանը պահանջում է Թուրքիայից, որ նա ներողություն խնդրի «հայկական բռնագաղթի» համար և վնասների հատուցում կատարի: Երկրորդ խնդիրն այժմեական է՝ դա Ղարաբաղի հակամարտության հարցն է:

Վերադառնանք առաջին խնդրին: Ես ցանկանում եմ որ Հայաստանի ղեկավարները սին հույսեր չներշնչեն իրենց ժողովրդին: Ոչ ներկայումս և ոչ էլ մոտիկ ապագայում Թուրքիայի Հանրապետության ոչ մի կառավարություն չի համարձակվի նման քայլի դիմել և հակադրվել երկրում իշխող հասարակական կարծիքին: Ճիշտ կլիներ այն, որ մենք բոլորս ներողություն խնդրեինք իրարից անցյալում գործված բոլոր անարդարությունների և հալածանքների համար: Ես անձամբ կարող էի ներողություն սպասել այն հայ ֆիդայիների թոռներից, որոնք սպանեցին իմ մեծ հորը, 1916թ. սկզբին, Էրզրում մտնելով ռուսական բանակի ետևից: Բայց եկեք լինենք ավելի իրապաշտ: Թույլ չտանք, որ պատմության ուրվականը մթագնի այսօրվա օրը: Երբ ես քննում եմ հայ և թուրք հեղինակների աշխատությունները այս նյութի վերաբերյալ, տեսնում եմ, որ անցած ութսունհինգ տարիները բավարար չեն եղել արդարացիորեն դատելու անցյալը: Առայժմ պահանջենք թուրք և հայ կառավարություններից, որ նրանք հրաժարվեն սադրիչ և միտումնավոր հրատարակությունները քաջալերելուց: Որ այդ երկու երկրների քաղաքական ղեկավարները չզոհաբերեն մեր ժողովուրդների ապագան իրենց անձնական կարճատև շահերին:

Ադրբեջանի հետ հակամարտության հարցը թվում է շատ փշոտ մի խնդիր է: Բացի այն փաստից, որ թուրքերը և ազերիները համակված են նույն զգացումներով, քանի որ խոսում են միևնույն լեզվով, Թուրքիան պետք ունի Կովկասի նավթին և Թուրքմենիստանի բնական գազին, որ ինքը մտադիր է փոխադրել Ադրբեջանի տարածքով: Ղարաբաղի հարցը սերտորեն կապված է Ադրբեջանի անկախության հետ: Իրականում կարելի էր Ղարաբաղի դեպքում անել այն, ինչ որ Թուրքիան արեց սրանից քսանհինգ տարի առաջ թուրք կիպրոսցիների համար: Բայց այդպիսի մի բան հնարավոր չէ ընդունել տալ ազերի ազգայնականներին, որոնք, չնայած Ադրբեջանի կրած պարտությանը, չեն ցանկանում հրաժարվել Ղարաբաղից: Տարիներ ի վեր Ադրբեջանը զբաղվում է փախստականներով: Ես կարծում եմ, թե Ադրբեջանը պետք է ընդունի Ղարաբաղի կցումը Հայաստանի հանրապետությանը, մի բան, որն, ի դեպ, գործնականում գոյություն ունի արդեն, և դրա փոխարեն իրեն միացնի Նախիջևանը, որին ինքը կկապվի Հայաստանի կողմից իրեն զիջվելիք մի միջանցքի միջոցով: Դրա համար անհրաժեշտ կլինի կատարել բնակչությունների փոխանակում: Այս ծրագիրը կարող է իրականացվել շնորհիվ Թուրքիայի, Միացյալ Նահանգների և Եվրոմիության նյութական օգնության, առանց դիպչելու երկու կողմերի արժանապատվությանը: Թուրքական հանրապետությունը կարող է ընդունել տալ այս ծրագիրն ադրբեջանցիներին, եթե Հայաստանը համաձայնվի: Խաղաղության այս ծրագրով, Ադրբեջանի ընդդիմությունը հաղթահարելու դեպքում, հնարավոր կլինի հաստատել բարիդրացիական հարաբերություններ Հայաստանի և Թուրքիայի միջև, սկսելով տնտեսական մարզից: Ես չեմ կարծում թե այս լուծումը հեշտ կլինի կիրառել: Լինի այն Թուրքիայում կամ Հայաստանում՝ միայն բարձր քաղաքական ղեկավար-

ներդ կարող են նման դժվարին գործ իրականացնել: Բայց ոչ մի այլ միջոց գոյություն չունի ներկայիս տառապանքներին վերջ դնելու համար:

Ըստ իմ տեղեկությունների՝ Հայաստանի հանրապետությունն ի սկզբանե ունի մեծ անտեսական դժվարություններ: Ռազմական անհրաժեշտությունը, Ադրբեջանի հետ հակամարտության պատճառով, նրան ստիպել է մերձենալ Ռուսաստանին՝ նրանից անջատվելու փոխարեն: Մյուս կողմից, Միացյալ Նահանգների հզոր սփյուռքը, համակված, անկասկած, բարի կամեցողությամբ, միջամուխ է լինում Հայաստանի քաղաքական կյանքին: Բարիդրացիական և բարեկամական հարաբերությունների հաստատումը Թուրքիայի հանրապետության և Հայաստանի միջև կօգնի վերջինիս հաղթահարել իր ներկա դժվարությունները: Թուրք և հայ գործարարները, Իրանի և Ադրբեջանի միջնորդությանը դիմելու փոխարեն կկարողանան ուղղակի առևտրական կապեր հաստատել և, նույնիսկ, իրականացնել համատեղ ներդրումներ:

Սա է անցյալի վերքերն ամոքելու լավագույն միջոցը: Գուցե մի օր թուրք և հայ պատմաբանները կարողանան անաչառ հայացք գցել անցյալին և դասեր քաղել կլած տառապանքներից, վրիժառության պատճառներ որոնելու փոխարեն: Այդ հույսով ես երջանկություն եմ մաղթում աշխարհի բոլոր հայերին: